ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ (ԱՐՄՍՏԱՏ)

ք. Երևան 19.02.2024թ.

(կազմելու վայրը)

Երևան Քաղաքի Վարչություն

(ԱՐՄՍՏԱՏ կառուցվածքային ստորաբաժանում)

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՏԵՂԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Ծանուցվող անձ՝ «ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՎԻՐԱԲՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ի տնօրեն ԱՆԴՐԱՆԻԿ ԹՈՒԹԼՅԱՆ

Ծանուցվող անձի հասցե՝ ՀՀ, Ք. ԵՐԵՎԱՆ, ԱՐԱԲԿԻՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ Փ. / 12 շ. / 29 բն.

Ձեր նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ 2023 թվականի դեկտեմբեր ամսվա «Ծառայությունների ծավալի մասին» Ձև 1-ծառայություններ (ամսական) վիճակագրական հաշվետվությունը **սահմանված ժամկետում չներկայացնելու համար:**

Վարչական գործի քննությունը տեղի կունենա **2024թ. փետրվարի 26-ին, ժամը 14:30-ին**

ք. Երևան, Դավիթ Անհաղթի 23/6 4-րդ հարկ:

Գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցվելու և չներկայանալու դեպքում գործը կքննվի Ձեր բացակայությամբ:

Լիազորված անձի գործի քննությանը ներկայանալու դեպքում ներկայացվում է վերջինիս լիազորությունները հավաստող փաստաթուղթ և անձը հաստատող փաստաթուղթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի 14-րդ մասի 1-ին կետի համաձայն՝

«Եթե անձը հրաժարվել է ստանալ փոստային առաքանին, կամ կողմի նշած հասցեով ուղարկված փոստային առաքանին վերադարձվել է, կամ պատվիրված նամակով ուղարկվելու դեպքում ուղարկվելու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, վարչական մարմինը չի ստացել հետադարձ ծանուցումը (ծանուցման մասին անդորրագիրը), կամ վարչական վարույթի մասնակցի հասցեն անհայտ է, ապա ծանուցումն ուղարկվում է՝

1) ֆիզիկական անձի դեպքում՝ աշխատանքի վայրի հասցեով (վարչական վարույթի նյութերում դրա առկայության դեպքում) և անձի վերջին հայտնի բնակության վայրի համապատասխան համայնքի կամ

վարչական շրջանի ղեկավարին (բացառությամբ այն դեպքերի, երբ վարչական վարույթը հարուցվել է համայնքի կողմից), իսկ վարչական վարույթում ֆիզիկական անձի այլ հասցեների, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի վերաբերյալ տվյալների առկայության դեպքում՝ այդ հասցեներով ...:

Սույն հոդվածի 15-րդ մասով սահմանված գործողությունները կատարելու հետ ***միաժամանակ*** ծանուցումը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: ***Նշված գործողությունները կատարելուց հետո՝ 5-րդ օրը, համապատասխան ծանուցումները համարվում են հանձնված (ստացված):***

Վարչական իրավախախտումների և հաշվետ. մոնիթորինգի բաժնի պետ Լ. Մանուկյան

(ծանուցագիրը կազմողի պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)